Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է ֆեդերատիվ մեթոդմիավորման 30.03 2022թ. -ի թիվ 2 նիստում
Ֆեդերատիվ մեթոդմիավորման ղեկավար՝ Ռ.Պետրոսյան

Պլան
սեղանի թենիսի մրցաշարի

Անցկացման ժամկետը՝ 20 փետրվար 2023թ.
Անցկացման վայրը՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճ
Կուրսեր

Նպատակը .
- խթանել հետաքրքրություն սեղանի թենիսի նկատմամբ,
- կազմակերպել ուսումնարանի հավաքական թիմ,
- զարգացնել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- ձևավորել տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնելու, արագ կողմնորոշվելու, հաղորդակցվելու, համագործակցելու կարողություններ,
- զարգացնել ուսանողի ֆիզիկական պատրաստվածություն,
- ձևավորել տակտիկական գործողություններ կատարելու տեխնիկա /ստնդծագործական կիրառություն/:

Վերջնարդյունք
Ուսանողը կարողանա խաղալ սեղանի թենիս՝ տակտիկական ճշգրիտ գործողություններ կատարելով

Նախապատրաստական աշխատանքներ.
- սեղանի թենիսի պարապմունքների անցկացում,
- մրցույթի մասնակիցների հավաքագրում,
- մրցակարգի մշակում /օլիմպիական մրցակարգ/,
- միմակահանության անցկացում,
- պատվոգրերի պատրաստում:

Ընթացքը.
- մրցույթի մասնակիցների ներկայացում,
- օլիմպիական կանոնակարգի ներկայացում՝ համաձայն սեղանի թենիսի կանոնակարգի,
- I, II, III մրցանակային տեղերի զեռահատում մրցավարի կողմից,
- համապատասխան պատվոգրերի հանձնում:

Անհրաժեշտ մարզագույք
- սեղանի թենիսի զնդաթի,
- սեղանի թենիսի զնդակներ,
- թենիսի սեղան,
- սուլիչ,
- A4 ձևաչափի թուղթ /պատվոգրերի համար/:

/Գիշ ներկայացվում է մրցաշարի մասնակիցների ցանկը/:

Պատասխանատու՝ Ն. Սուքիասյան

Լուսաբանում

«ՄԵՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՌՕՐՅԱՆ...»

2023 թվականի փետրվարի 20-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի մարզադահլիճում, օլիմպիական սկզբունքով անցկացվեց սեղանի թենիսի ներուսումնարանային մրցաշարը: Մրցակիցների միջև միավորի համար մղվեց ազնիվ պայքար:

Խաղը վարեց ֆիզկուլտուրայի դասախոս Ս.Մկրտչյանը, իսկ ուսանողների՝ խաղին ակտիվ մասնակցությունն ապահովեց Վ.Կարապետյանը:

Մեծ էր խաղացողների ոգևորությունը մրցաշարի ընթացքում, երբ երիտասարդ մասնակիցներն իրենց ուժերը չափելով այս մարզաձևում՝ գրանցեցին հաղթության հետևյալ արդյունքները.

1-ին տեղ՝ «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող՝ Ազատ Ասատրյան,

2-րդ տեղ՝ «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող՝ Վաչագան Առաքելյան,

3-րդ տեղ՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ» I կուրսի ուսանող՝ Վլադիմիր Հովհաննիսյան:

Մրցանակային տեղեր զբաղեցրած ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով և խրախուսվեցին տնօրինության կողմից :

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«ԱՊԱԿՈՒ ՏԱԿ ԴՐՎԱԾ ՎԱՐԴԸ...»

Օրը թումանյանական էր՝ առլեցուն ստեղծագործողի իմաստուն և խոհափիլիսոփայական մտքերով:

«Թարգմանությունը նման է ապակու տակ դրված վարդի, տեսք ունի, բայց բույր չունի» ամենայն հայոց բանաստեղծ Հ.Թումանյանի հանրահռչակ այս ասույթով սկսվեց «Ապակու տակ դրված վարդը...» խորագրով բաց դասը:

Համակցված դասը նվիրված էր Թումանյան-թարգմանչին, ում կախարդական գրչով արարվել են իսկական արվեստի հրաշքներ: Սովորողները գրագետ ներկայացրին բանաստեղծի անկրկնելի գործերը և համաշխարհային գրականության այն գոհարները, որոնք թարգմանվել էին մեծն Թումանյանի կողմից:

Գրքերը հերթով, խոսուն իրար կողքի շարված էին սեղանին, իսկ լսարանում արվեստի չափաբաժինն աստիճանաբար ավելանում էր...

Ուսանողներն անդրադարձան գիրք նվիրելու ամենամյա ավանդույթին և կրթօջախի գրադարանին նվիրեցին գեղարվեստական գրքերի մի փոքր կապոց:

Բովանդակալից տեսանյութերը և սահիկաշարերը բաց դասը դարձրեցին յուրատիպ, իսկ երեք լեզուներով հնչած ասմունքը՝ լիրիկական:Դրվատանքի և հիացական խոսքով հանդես եկավ հումանիտար հանձնախմբի անդամ Ս.Ավետիսյանը՝ ամփոփելով չարենցյան անզուգական թևավոր մտքով. «Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր»:

Ուսանողներն եկան այն համոզմա ն, որ բազմակողմանի զարգացած մարդու կյանքում անուրանալի է ընթերցանության դերը:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
Քննարկվել է հուսանելիության մշ թիվ 2 նիստում 30.08.2022թ.
Մշ նախագահ՝ Թ. Գրիգորյան

ԲԱՑ ԴԱՍԻ

ՊԼԱՆ

Առարկա՝ «Հասարակագիտություն»

Անցկացման ժամկետը՝ 24.02 2023թ.

Դասավանդող՝ Ա. Մալխասյան

Կուրս՝ Օպերատոր հոսանակարգչի II

Թեմա՝ «Մարդու իրավունքների պաշտպանություն»

Դասի նպատակը՝

1. Հարստացնել «Մարդու իրավունքներ, պաշտպանություն» թեմայի շուրջ ուսանողների ձեռք բերած գիտելիքները:
2. Զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունները:
3. Զարգացնել բանավոր խոսքը և ինքնուրույն մտածելու կարողությունները:
4. Ձևավորել թիմում աշխատելու կարողություններ:
5. Ստեղծել միջառարկայական կապ:
6. Ձևավորել ժամանակի ճիշտ կառավարման հմտությունները:

Վերջնարդյունք՝

Սովորողներն իմանան մարդու իրավունքների և իրավունքների պաշտպանությունը: Կարողանան արդյունավետ և գրագետ աշխատել թիմում:

Նախապատրաստական աշխատանքներ՝

Թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում: Տեսանյութի ներբեռնում, սահիկաշարի պատրաստում, թեստերի ստեղծում:

Դասի ընթացքը՝

Ներկայացնել ստորև նշված թեմաները՝ միջանկյալ սահիկաշարի և տեսանյութերի ցուցադրմամբ

- «Անկախության հռչակագիր» ի և ԱՄՆ սահմանադրության ընդունման պատմությունը:
- Ֆրանսիական հեղափոխություն:
- Ստրկության վերացում, ռասայական հավասարություն:
- ՄԱԿ -ի ստեղծումը:
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը:
- 22 անկախության հռչակումը:
- Մարդու իրավունքների պաշտպանի մասին 22 օրենքը:
- Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային համակարգ:
- Ներգրավել մարդու իրավունքների դերը ժողովրդական հաստատության կայացման գործում:

Ուսանողներին բաժանել 2 խմբի և բարձրագույն աշխատանքի օգնությամբ գիտելիքների ստացում սահմանված ժամանակում՝ 5ր/համագործակցային ուսուցման մեթոդի կիրառում:

Գնահատում՝

Լավագույն մասնակցությունը ստացած խումբը համարվում է հաղթող:

Լուսաբանում

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

2023 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 14:30-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց «Մարդու իրավունքների պատմությունը» թեմայով բաց դասը: Դասի թեման խոսուն էր, դաստիարակող և նպատակն էր հարստացնել թեմայի շուրջ ուսանողների ձեռք բերած գիտելիքները: Դասին մասնակցեց 17 ուսանող:

Հասարակագիտության դասը մեկնարկեց հին հույն փիլիսոփա Պրոտագորասի «Մարդը չափանիշն է բոլոր իրերի՝ գոյություն ունեցողների, որ դրանք գոյություն ունեն, և գոյություն չունեցողների, որ դրանք գոյություն չունեն» դրույթով, որին հաջորդեց դասի նպատակի ներկայացումը և խոսուն նախաբանը: Հետազոտական աշխատանքների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը խմբագրվել և մշակվել էր ուսանողների կողմից: Այն ուսուցանող և հետաքրքիր սահիկաշարի միջոցով մատուցվեց լսարանին: Ներկայացվեց ՀՀ անկախության հռչակման մասին տեսանյութ, որը տրամաբանորեն շաղկապված էր անկախության ձեռքբերման արգասիքի, ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանի դերակատարության, քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի մասին բարձրաձայնվող թեմաների հետ: Հետաքրքիր զրույց-քննարկում ծավալվեց «Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային համակարգ», «Ներկայացնել մարդու իրավունքների դերը ժողովրդական հասարակության կայացման գործում» թեմաների շուրջ և լսարանում դեռահաս սովորողների կողմից հնչեց տարբեր կարծիքներ:

Իմաստի ընկալման փուլում ուսանողները բաժանվեցին երկու թիմի՝ «Գիրք դատաստանի», «Կանոնագիրք հայոց» և գիտելիքների ամրապնդման նպատակով ուսանողներին տրվեց քարտային աշխատանք: Սահմանված ժամանակահատվածում ուսանողները գրագետ կատարեցին առաջադրանքը և հաղթեց Գիրք դատաստանի» թիմը:

Դասի ավարտին, որպես իրավագիտակ և պահանջատեր քաղաքացիներ, ուսանողները եկան այն եզրահանգման որ. «Առողջ հասարակություն ունենալու համար կարևոր նախապայման է հանդիսանում մարդու իրավունքների պահպանումը»:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրիի 4 արհեստագործական-տեխնոլոգիական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
30 08 2022 թ.
Մ/մ նախագահ՝ Ա. Դանիելյան

Պլան
բաց դասի

Մասնագիտություն՝ «Զարդավիրակած արվեստ և զարդային դիզայնարդարում՝ փարահատակ»
Կուրս՝ վարպետարան II
Անցկացման ամսաթիվ՝ 18.02 2023 թ.
Թեմա՝ «Ծնունդի մազեր. էթիկան, մշակույթը»

Նպատակ

- Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները
- Ձևավորել մասնագիտական կարողություններ
- Զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ
- Զարգացնել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն
- Ուսանողներին մազերի խնամքի և բուժման ժամանակակից մեթոդներին, միջոցներին

Արդյունքներ

- Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած,կարողություններով հագեցած,հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված, ուսանողներ:

Նախապատրաստական փուլ

- Ուսանողներին հանձնարարել գտնել և մշակել թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն/տեսանյութ, տեքստ/
- Ստեղծել թեմատիկ բովանդակալից սահիկաշար

Ընթացք

Տնական գիտելիքների ներկայացում

- Նախաբանի ներկայացում՝ «Ծնունդի մազերի էթիկան»
- Սահիկաշարի և տեսանյութի միջոցով մազերի խնամքի և բուժման ժամանակակից մեթոդների վերաբերյալ հարմարում տեղեկատվության ներդրումը
  - ✓ պեռմանենտ,
  - ✓ նանոպլաստիկա,
  - ✓ բիոպլաստիկա,
  - ✓ բոտեքս,
  - ✓ մեզոթերապիա

Գործնական աշխատանքների ցուցադրում և մեկնաբանում

- Ալրված մազերի խնամքի իրականացում/հետազոտում/
- Ինքնքի բնական միջոցների օգնությամբ իրականացված բոտեքսի մասին նախապես նկարահանված տեսանյութի ցուցադրություն-մեկնաբանում:

Պատասխանատու՝ Լ.Հովհաննիսյան

Լուսաբանում

«Գեղեցկությունը բուրմունք է ու մենք ճաշակում ենք նրա թովչանքը, ինչպես ամեն մի բուրմունքի հոտառություն»:

Լոպե դե Վեգայի այս իմաստուն խոսքերով մեկնարկեց «Խնամված մազեր.էթիկան, խնամքի կուլտուրան» թեմայով բաց դասը:

«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց ուսանելի, ակնահաճո և գեղագիտական ճաշակ ձևավորող դասը: Ամենուր խնամքի անուշաբույր միջոցների բույրն էր տարածված և ներկաները ճաշակում էին գեղեցկության բուրմունքը…

Վարսահարդարման հագեցած լսարանում տարբեր հնարների, ժամանակակից արդյունավետ մեթոդների և դիդակտիկ ռեսուրսների կիրառմամբ անցկացվեց բաց դաս, որը հնարավորություն տվեց հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները և կարողությունները:

Բաց դասի մասնակիցները ցուցադրեցին մազերի խնամքի ժամանակակից միջոցները՝ անդրադառնալով վերջիններիս դերին, կիրառման անհրաժեշտությանն ու նշանակությանը: Սահուն կերպով անցում կատարվեց դեպի մազերի բուժման նորարարական մեթոդներ /պեռեֆորիզ, նանոպլաստիկա, բիոպլաստիկա, բոտեքս, մեզոթերապիա/՝ կարևորելով անձի խնամված, գեղեցիկ արտաքինը:

Դասի ավարտին ուսանողները կատարեցին վնասված մազերի հեռացում՝ խնամքի անհրաժեշտ միջոցների կիրառմամբ և ցուցադրվեցին նախապես նկարահանված տեսանյութեր՝ խնամքի բնական միջոցների օգնությամբ իրականացված բոտեքսի վերաբերյալ: Իրականացված վարսահարդարման առաջադրանքները դասը դարձրեցին առավել տպավորիչ և գործնական:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԷՔՍՊՈ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ «ՏԱՐՎԱ ԲԱՑՈՒՄ 2023»-ԻՆ

2023 թվականի հունվարի 31-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության դասախոսներ Ա.Պետոյանը, Հ.Մաղաքյանը և չորս ուսանողներ մասնակցեցին ´´Double Tree by Hilton'' հյուրանոցում տեղի ունեցած 6-րդ միջազգային "Food Alco Tasting HoReCa" B2B էքսպո ցուցահանդեսին, որտեղ կայացավ HoReCa սեգմենտի լավագույն արտադրողների և սպառողների նպատակային հանդիպումը: Ցուցահանդեսի շրջանակներում իրականացվեց «Հայաստանի Խոհարարների Ասոցիացիա»-ի անդամների նախնական հավաքագրում: Ուշագրավ էր շեֆ խոհարար Տիգրան Ղամբարյանի կողմից ներկայացված ասոցիացիայի առաքելության, ծավալած գործունեության և ոլորտների մասին հակիրճ տեղեկատվությունը, որին հաջորդեց արհեստավարժ հայ խոհարարների ցուցադրած վարպետաց դասերը:

Հետաքրքիր էր կազմակերպված տարբեր արտադրողների կողմից գեղեցիկ ձևավորումներով և փաթեթավորմամբ ապրանքատեսակների ցուցադրումը և խոհարարների կողմից պատրաստված համադամ ուտեստների համտեսը:

Միջոցառումը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների տվորողների հետ, իրականացնել արդյունավետ փորձի փոխանակում, ապահովել հանրային իրազեկում և ընդլայնել համագործակցության շրջանակները:

Դասախոս՝ Ա. Պետոյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

CAPRAE
PRODUCTS
OSQ

Լուսաբանում

Օ՜, ԲԱՐԵԿԻ՛ՐԹ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՄԵՐ ԽՈՆԱՐՀՈՒՄՆ ՈՒ ՀԱՐԳԱՆՔԸ ՔԵԶ...

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում գարնանային այս ինքնատիպ օրը տոնական էր և տարբերվող. զունագեղ ծաղիկներ, խորհրդանշական բացիկներ, անկեղծ բարեմաղթանքների տեղատարափ՝ ի նշան կանանց արժևորման և մեծ գնահատանքի:

Ուսանողական խորհուրդն իր անակնկալ շնորհավորանքով տպավորեց մանկավարժական հանրույթի կին ներկայացուցիչներին՝ վկայակոչելով մի պարզ ճշմարտություն. «Հայ կինը, լինելով աշխարհի ամենախոնարհ, նուրբ ու սրտացավ էակը, ուժեղ կամքի, աներևակայելի համբերության և հզոր ուժի մարմնացումն է: Անառարկելի է հայ կնոջ դերը, ինչպես ընտանիքի պահպանման, նոր սերնդի կրթման, դաստիարակության, այնպես էլ պետության համար կարևորագույն և շրջադարձային ժամանակաշրջաններում»:

«ԹՐԱՖԻՔԻՆԳԸ՝ ՍՊԻՏԱԿ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ...»

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ անկացվեց «Թրաֆիքինգ» թեմայով զեկույց, որը վարեց ուսումնական հաստատության դասախոս Ս.Ավետիսյանը: Զեկույցը միտված էր ուսանողության շրջանում բարձրացնելու թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:

Զեկուցողը ներկայացրեց մարդկանց անօրինական շահագործումը որպես դարի չարիք՝ թրաֆիքինգ-երևույթի մասին. նրա սահմանումը, վիճակագրությունը, աշխարհագրությունը, պատմական և սոցիալական խթանիչները;

Զեկույցի ավարտին ծավալվեց հետաքրքիր քննարկում, որի ընթացքում դեռահաս ուսանողների կողմից բարձրաձայնվեցին մտահոգիչ մի շարք հարցեր:

Զեկույցը նպաստեց ուսանողների մոտ ձևավորելու մարդկային շահագործման և «զոհի» կարգավիճակ-վիկտիմոլոգիայի նկատմամբ անընդունելի, արգահատելի քննադատական վերաբերմունքը:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ՔՐԵՈՐԵՆ ՊԱՏԺԵԼԻ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԹՐԱՖԻՔԻՆԳԸ՝
ՍՊԻՏԱԿ
ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՄԵՐ ՀԵՏՔԸ ԴՆԵՆՔ ՏԻԵԶԵՐՔԻ ՎՐԱ...»

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանող Սամվել Պողոսյանը 2023 թվականի մարտի 13-ին մասնակցեց ՛՛Միասին՛՛ հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված խոհարարության վարպետաց դասին: Որպես խոհարարական հմտություններով և ստեղծագործական հնարներով օժտված ակտիվ կամավոր՝ մեր ուսանողը վարպետաց դասի ժամանակ պատրաստեց բեզե՝ մանրամասն ներկայացնելով բեզեի պատրաստման տեխնոլոգիան, տեխնիկան: Համային տարբեր լուծումներով անուշեղենի թխման գործընթացին մասնակցեցին Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի խոհարար մասնագիտության ուսանողները: Գործնական մթնոլորտն ապահովված էր, արդյունավետ հանդիպումը՝ կայացած:

«Խոհանոցը արվեստ է, որտեղ պետք է ստեղծագործես: Միայն բաղադրատոմսի համաձայն, համեղ չի ստացվի պատրաստումը, «տրամադրությունը, սերը և զգացմունքները» պիտի լինեն հավելյալ անուշահամ համեմունքները: Կան կանոններ, որոնք պետք է իմանաս և պահպանես, մնացածը շրջանակից դուրս է, միայն երևակայություն»,-ասում է Ս.Պողոսյանը:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՅՑ ՀԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ

2023 թվականի մարտի 15-ին, կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի նախաձեռնությամբ, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողներն այցելեցին «Լենտեքս» ՍՊԸ: Այցելության շրջանակներում ուսանողներին ներկայացվեցին մարքեթինգային ճկուն քաղաքականության շնորհիվ ձեռնարկության հզորացման հետագիծը և հաջողության հասնելու գաղտնիքները: Սովորողներին հնարավորություն ընձեռնվեց նաև ակտիվ մասնակիցը դառնալ տարբեր արտադրամասերում գործող սարքավորումների շահագործման գործընթացին՝ արդեն ծանոթ լինելով աշխատատեղի ճիշտ կազմակերպմանը:

«Ի՞նչ է աշխատաշուկան», «Արտադրող-սպառող գրագետ համագործակցություն», «Թիմում կազմակերպված և արդյունավետ աշխատելու ունակություններ» թեմաները դարձան խթան հետագայում աշխատանք գտնելու հնարավորությունների բացահայտմանը:

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողների մասնագիտական հիմնարար գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը կհամարվի աշխատաշուկա մուտք գործելու երաշխավորված արտոնագիր:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի նպատակամետ մասնակցությունը «Արևային էներգիայի կիրառումը որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց» ծրագրին

Հայկական Կարիտասը «Արևային էներգիայի կիրառումը որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց» ծրագրի շրջանակներում, մարտի 20-26 հայտարարել է «Երկրի ժամը» իրազեկման շաբաթ, որի շրջանակում՝ 2023 թվականի մարտի 22-ին, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողները մեծ գիտակցումով և ոգևորությամբ մասնակիցը դարձան աշխարհի ամենամեծ բնապահպանական շարժմանը: «Բնության հետ ներդաշնակ» կարգախոսը իրազեկման գործուն խթան կհանդիսանա կլիմայի փոփոխության ու շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների բաձրաձայնման և լուծման հարցում: Որպես շարժման հոգացավ մասնակից՝ ուսանողները այսուհետ կապրեն և կստեղծագործեն այն գիտակցումով, որ փոքր «էկոլոգիական ոտնահետքը» կփրկի **Երկիր** մոլորակը:

Բնության և Երկիր մոլորակի պահպանության համար լուծումներ գտնելու և միջոցներ ձեռնարկելու շուրջ իր գործնական ներդրումն է արել նաև մեր կրթօջախը՝ ուսումնական հաստատության բակում տեղադրելով արևային էներգիայի վերականգնվող կայան:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ՊԼԱՆԱՎՈՐԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ...

2023 թվականի մարտի 22-ին, կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի նախաձեռնությամբ և արտադրական ուսուցման վարպետ Ա.Մարտիրոսյանի ուղեկցությամբ «Ոսկերչություն» մասնագիտության առաջին կուրսեցիներն այցելեցին խաղահրապարակների և մարզահրապարակների սարքավորումների արտադրությամբ զբաղվող Գյումրու ´´Մագնոն´´ ընկերություն:

Այցելության շրջանակներում ընկերության ձեռներեց ղեկավարի կողմից մանրակրկիտ ներկայացվեց մետաղական կոնստրուկցիաների արտադրության արգասաբեր գործունեությունը ոչ միայն ՀՀ-ում, այլև՝ Անդրկովկասում: Սովորողները ակնդիրը դարձան մեծ հեղինակություն վայելող ընկերության կողմից արտադրված կիրառական սարքավորումների, որոնց բազմազանությունը և բարձր որակը երաշխիք էին մեծ հաջողության:

Ուսանողների հետաքրքրության արդյունքում ծավալվեց արդյունավետ զրույց-քննարկում գործատուի և սովորողների միջև:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

ՓԱՓՈՒԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ՝ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔ

Ս/թ մարտի 23-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, տեղի ունեցավ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝ «Action Against Hunger» կազմակերպության կողմից իրականացվող «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված զբաղվածության ոլորտում կիրառվող նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանության չորսամսյա դասընթացների մասնակիցների վկայագրերի հանձնման արարողությունը:

Ուսումնական հաստատությունն իր հարկի տակ հյուրընկալեց Action Against Hunger կազմակերպության՝ սոցիալական ներառման ծրագրերի ղեկավար Լեյլա Մահուրաձեին, Action Against Hunger Հայաստանի գրասենյակի ղեկավար Գրիգորի Հովհաննիսյանին, ծրագրի պատասխանատու Հասմիկ Սիմոնյանին, GIZ-ի մոնիթորինգի և գնահատման մասնագետ՝ Ռուզաննա Բեժանյանին, Շիրակի մարզի ՄԿՈՒ ոլորտի տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և այլոց:

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Ք.Ահարոնյանի կողմից վկայագրեր հանձնվեցին ծրագրի դասընթացավարներ՝ կարիերային ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանին և դասախոս Ժ.Բարսեղյանին: Վերջիններս խրախուսվեցին «SHUTTLE» դասընթացների ընթացքում ցուցաբերած բարձր կատարողականի, աջակցության և նվիրվածության համար:

Համագործակցային ծրագիրը դասընթացի մասնակից ուսանողների համար լայն հնարավորություններ ստեղծեց սահուն կերպով մուտք գործել աշխատաշուկա և ապահովել նրանց տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՀԱՐՆԵՐԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՐԴԱՆՈՑՈՒՄ

2023 թվականի ապրիլի 11-ին կրթօջախի «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության III կուրսերի հինգ ուսանողներ մասնակցեցին «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից կազմակերպված ստեղծագործական մրցույթին: Վերջինս ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակում էր: Ներշնչանքի աղբյուրը ֆրանսիացի փիլիսոփա Հենրի Բերգսոնի միտքն էր.«Կատակերգությունն ավելի մոտ է իրական կյանքին, քան դրաման»:

Ուսանողների կողմից ընտրված «Կատակասեր գյումրեցու և նրբագեղ ֆրանսուհու հանդիպումը» թեմայով ձեռակերտ ստեղծագործական աշխատանքները՝ որպես նյութական արժեքներ, եզակի էին իրենց տեսակով և արժանացան բացառիկ գնահատականի՝ «Գրան Պրի» / GRAND PRIX/ հավաստագրի:

«Յուրաքանչյուր մասնագիտություն ունի իր «պատվի օրենսգիրքը» և մի շարք կանոնները, որոնք պետք է խստորեն պահպանվեն»: Հավատարիմ մնալով իրենց ընտրած մասնագիտական սկզբունքներին՝ երիտասարդ ուսանողները անխախտ պահեցին մի շարք կանոններ:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

2023 թվականի մարտի 28-ին «Խոհարարական գործ» մասնագիտության I կուրսի ուսանողների մասնակցությամբ Սրբոց Վարդանանց տոնին նվիրված միջոցառումների շրջանակում իրականացվեց «Ավարայր» խորագրով ֆիլմի դիտում-քննարկումը:

Ուսանողների կողմից Սրբոց Վարդանանց տոնի խորհրդի ներկայացումը դասը դարձրեց առավել տպավորիչ: Սովորողները անշուշտ քաջատեղյակ էին, որ հայ առաքելական եկեղեցին Ավարայրի ճակատամարտում հերոսաբար զոհվածներին դասել է սուրբ նահատակների շարքին և նրանց հիշատակի օրը մտել է եկեղեցական տոնացույցի մեջ որպես **Սուրբ Վարդանանց տոն:**

«Ավարայր» խորագրով բովանդակալից և փաստերով առլի ֆիլմի դիտում-քննարկումը ուսանողների համար առիթ հանդիսացավ ևս մեկ անգամ վկայակոչել, որ հայրենիքի և հավատքի պաշտպանության համար մղված Վարդանանց պատերազմը հայոց ազատատենչ ոգու վառ արտահայտությունն էր: Ավարայրի ճակատամարտը՝ որպես գոյամարտ, հաղթանակ էր ընդդեմ բռնակալության, դավանափոխության, մահվան:

Եղիշեի Վարդանանց սխրանքը բնութագրող միտքը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» ներկաների համար այսուհետ կդառնա ոգեշնչման և հայրենիքը կյանքի գնով պաշտպանելու վեհ գաղափար, որի շուրջ էլ ծավալվեց գոյամարտի պատճառների, ընթացքի և հետևանքների մասին իմաստալից քննարկումը:

Դեռահասների կողմից հնչեցրած կարծիքները վկայությունն էին այն իրողության, որ հայը պարտավոր է արժևորել Վարդանանց պատերազմում հայ ժողովրդի մղած պայքարի մեծագույն ձեռքբերումները: Իսկ ուսանողները՝ որպես մատաղ սերնդի հայրենասեր ներկայացուցիչներ, ներշնչվեցին սեփական ժողովրդի անկոտրում ոգու և ապագայի նկատմամբ մեծ հույսով և հավատով:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է բնագիտամաթեմատիկական մ/մ թիվ 11 նիստում
28 02 _____ 2023 թ.
Մեթոդմիավորման նախագահ՝ Ռ. Պետրոսյան

Լաբորատոր փորձերի անցկացման

Պլան

Առարկա՝ Քիմիա

Թեմա՝ «Քիմիան և լաբորատորիան»

Դասավանդող՝ Քրիստինե Մարկոսյան

Կուրս՝ «Ուսկերչություն՝ ոսկերիչ», հոհաարարական գործ՝ խոհարար» I

Անցկացման ամսաթիվ՝ 24-31 մարտի 2023 թ.

Նպատակ

- Ձևավորել հետաքրքրություն քիմիա առարկայի նկատմամբ/լաբորատոր փորձերի միջոցով/
- Զարգացնել տնտեսական գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողություններ
- Զարգացնել թիմային աշխատանքի կարողություններ
- Ձևավորել վերլուծական և ընդհանրացման մտածողության կարողություններ

Վերջնարդյունք
Ուսանողները մասնակից կլինեն լաբորատոր փորձերին և կներկայացնեն փորձերի արդյունքները՝ կատարելով սեփական դիտարկումները

Դասի կահավորումը
Ամոնիումի բիքրոմատ, յոդ, օալա, վիտամին C, ջրածնի պերօքսիդ, կալիումի պերմանգանատ, ադաթթու, պղինձ, ցինկ, կալցիումի գլյուկոնատ, նատրիումի հիդրոսիդ, պղնձարջասպ, փորձանոթներ, տալիրտաշտոց, տալիրտ, բոնիչ, տիգել, գդալիկ, գրատախտակ

Դասի տիպը՝ գործնական, լաբորատոր

Դասի ընթացքը՝

- կազմակերպչական մասի իրականացում
- դասի նպատակի ներկայացում
- լաբորատոր փորձի ընթացքին ծանոթացում
- փորձերի կատարում
- արդյունքների վերլուծություն
- գրառում/
  1) կատարեցի
  2) դիտեցի
  3) եզրակացություն
- գնահատում

Լուսաբանում

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՇԱԲԱԹՎԱ ՀԱՋՈՂՎԱԾ ԱՎԱՐՏ...

Մարտի 31-ին «Ոսկերչություն» մասնագիտության III կուրսի ուսանողների մասնակցությամբ իրականացվեցին լաբորատոր փորձեր՝ նպատակ ունենալով հարստացնել ապագա ոսկերիչների մասնագիտական գիտելիքների պաշարը:

Քիմիա առարկայի հանդեպ սովորողների հետաքրքրությունների շրջանակն ընդլայնվեց, երբ անձամբ մասնակիցը դարձան փորձերի իրականացման գործընթացին: Առավել գոհացնող էր վերջնարդյունքը. ուսանողների կողմից մետաղների և թթուների փոխազդեցության քիմիական ռեակցիաների գրառման գործընթացը:

Փորձառու դասավանդողի կողմից իրականացված գործնական դասերը ծառայեցին նպատակին՝ ապահովելով ցանկալի արդյունքը.«Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
30 03 2023 թ.
Մ/մ նախագահ՝ Ա. Ղանդիլյան

Պլան
բաց դասի

Մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և գաբդաքին դիմահարդարում՝ վարսահարդար»
Կուրս՝ վարսահարդար I
Անցկացման ամսաթիվ՝ 31 03 2023 թ.
Թեմա՝ « Աշխարհահռչակ/հայ/ վարսահարդարների ձեռքերումները և հաջողության գաղտնիքները»

Նպատակ

- Հաղորդագրել մասնագիտական գիտելիքները
- Զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ
- Ձևավորել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն
- Ծանոթանալ աշխարհահռչակ/հայ/ վարսահարդարների ձեռքերումներին և աշխատանքային գործունեությանը

Վերջնարդյունք

- Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված ուսանողներ:

Նախապատրաստական փուլ

- Ուսանողներին հանձնարարել փնտրել և գտնել թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն/տեսանյութ, տեքստ/
- Ստեղծել թեմատիկ բովանդակալից սահիկաշար/ցուցապաստառ

Ընթացք

Տեսական գիտելիքների ներկայացում

- սահիկաշարի միջոցով
  - վարսահարդարման զարգացման պատմության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն,
  - «վարսավիրությունը որպես արվեստի գեղեցիկ դրսևորում»,
  - հետաքրքիր պատմություններ

- ցուցապաստառի միջոցով աշխարհահռչակ/հայ/ վարսահարդարների ձեռքերումների և հաջողության գաղտնիքների և աշխատանքային գործունեության մասին անհրաժեշտ տեղեկատվություն:

Պատասխանատու՝ Ա. Ղանդիլյան

«Բնությունն ամեն ինչի մասին այնպես է հոգացել, որ ամեն տեղ սովորելու բան գտնես...»

Լեոնարդո դա Վինչի

Մարտի 31-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» առաջին կուրսեցիների մասնակցությամբ իրականացվեց «Աշխարհահռչակ հայ վարսահարդարների ձեռբերումները և հաջողության գաղտնիքները» թեմայով բաց դասը՝ նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնել աշխարհահռչակ հայ վարսահարդարների ձեռբերումներին և աշխատանքային գործունեությանը, ձևավորել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն:

Ուսանողների կողմից մշակված և ներկայացված հետաքրքրաշարժ տեսանյութերը, թեմատիկ սահիկաշարերը ակնահաճո էին՝ հագեցած աշխարհահռչակ վարսահարադարների մասին խոսուն նյութերով: Ցուցադրվեցին նաև հայտնի ռճաբան-վարսահարդարների կատարելության հասնող արվեստի գործերը: Վերջինս տպավորեց լսարանին, քանզի աշխարհասփյուռ հայ արհեստագործների բացառիկ տաղանդը շնորհ է ի վերուստ:

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Քննարկված է հումանիտար մեթոդմիավորման

«30» 08 2022թ. թիվ 2 նիստում

Նախագահ՝ Ք. Գրիգորյան

Ծ Ր Ա Գ Ի Ր

բաց դասի

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ «Բարոյագիտության ոսկե կանոնը»

Կուրս՝ առաջին և երկրորդ կուրս

Անցկացման ամսաթիվ՝ 07 սեպտեմբեր 2022թ.

Դասավանդող՝ Ն.Մանուկյան

Նպատակը.

- Զարգացնել ուսանողների բանավոր խոսքը, խթանել գրագետ հաղորդակցմանը
- Ձևավորել բարոյագիտական արժեքներ/բարու և չարի, համեստության,ազնվության,գթասրտության/
- Զարգացնել ընկերասիրության և փոխօգնության ունակություն
- Բարձրացնել ուսանողների պատասխանատվության զգացումը
- Ստեղծել միջառարկայական կապ

Ընթացք

- Դասի նյութի մեկնաբանություն /իրավական և բարոյական նորմերի ներկայացում/
- Առաձի ունկնդրում, կարծիքների արտահայտում
- Աղյուսակի միջոցով իրավական և բարոյական նորմերի տարբերությունների ներկայացում, զուգահեռների անցկացում
- Բարոյագիտության ոսկե կանոնի արժևորում /դասի ամփոփում/

Ակնկալվող արդյունք

Բանավոր խոսքը հարստացրած և բարոյական բարձր արժեքները գնահատող ուսանողներ:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿԱՆՈՆԸ

2023 թվականի ապրիլի 4-ին ռուսաց լեզու առարկայից անցկացվեց «Բարոյագիտության ոսկե կանոնը» խորագրով բաց դասը: Բաց դասին մասնակցում էին ուսանողներ տարբեր կուրսերից: Դասին մասնակցեց 15 ուսանող:

Դասի նպատակն էր՝ զարգացնել ուսանողների բանավոր խոսքը, խթանել գրագետ հաղորդակցմանը, ձևավորել բարոյագիտական արժեքներ՝ բարություն, համեստություն, ազնվություն, գթասրտություն, մարդասիրություն, սերմանել ընկերասիրության և փոխօգնության կարողություն:

Հաշվի առնելով դեռահասների տարիքային առանձնահատկությունը դասախոսը նշեց թեմայի կարևորությունը և խոհախրատական դասի անհրաժեշտությունը:

Դասախոս Ն. Մանուկյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց դասի նպատակը՝ նշելով, որ թեման արդիական բոլոր ժամանակներում:

Ուսանողները աղյուսակի միջոցով ներկայացրին բարոյագիտական նորմերը իրավական և հասարակության մեջ վերջիններիս ընկալման տեսակետից: Ընթերցվեց թեմային վերաբերող առակներ՝ մատնանշելով բարոյախրատական իմաստը: Բովանդակալից տեսանյութի դիտումից հետո հնչեցին կարծիքներ, եզրակացությունը միակն էր. «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ուզում, որ անեն քեզ»:

Դասն ավարտին ցուցադրվեց սոցիալական շատ հուզիչ տեսանյութ, որտեղ առավել արտահայտիչ էր բարոյական արժեքների պահպանումը և մարդասիրությունը:

Կազմակերպիչ՝ Ն.Մանուկյան

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Լուսաբանում

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՍ ՔԵԶ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍ

2023 թվականի ապրիլի 13-ից 15-ը «Ոսկերչություն՝ոսկերիչ» առաջին կուրսի ուսանող **Սուրեն Խաչատրյանը** և «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» երկրորդ կուրսի ուսանող **Կարապետ Մկրտչյանը** մասնակցեցին Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում անցկացված ծանրամարտի պատանիների հուշամրցաշարին: Այն նվիրված էր Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած Էդվարդ Մարանջյանի հիշատակին:

Սուրեն Խաչատրյանը հանդես գալով 96 կգ քաշային կարգում՝ 245 կգ երկամարտի գումարով, գրավեց առաջին պատվավոր տեղ:

Կարապետ Մկրտչյանը հանդես գալով 61 կգ քաշային կարգում՝ 195 կգ երկամարտի գումարով, գրավեց երկրորդ պատվավոր տեղ:

Կամային բարձր հատկանիշներով օժտված ուսանողների ոգևորությունը ակնհայտ էր, քանզի պատվաբեր հաղթանակը նպատակային էր:

Մեր գառատառանից ռեռահաս ուսանողների ոնոհանուր տեսակետը խոսխուսեւի էր.

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

2
1
3